



ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՂԱԿԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Կորպորատիվ ֆինանսներ» մասնագիտացման
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող,
«Ֆիլիպ Սորիս Հայաստան» ընկերության
նվազեցված ռիսկի հարթակի հաճախորդների
աջակցության ծառայության ղեկավար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդվածում քննարկվում են ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտության հարցեր: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են բյուջեի կարճաժամկետ պլանավորման, ֆինանսական հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման, պարտքերի անարդյունավետ կառավարման, տեղեկությունների հավաքագրման և գնումներ կատարելու մշակույթի բացակայության, խնայողությունների անարդյունավետ կառավարման, ֆինանսական հաստատությունների նկատմամբ անբավարար վստահության խնդիրները: ՀՀ-ում ֆինանսական գրագիտության վիճակը դիտարկվել է միջազգային համեմատությունների համատեքստում:

Հիմնաբառեր. ֆինանսական գրագիտություն, բյուջեի պլանավորման ունակություններ, պարտքի արդյունավետ կառավարում, խնայողությունների անարդյունավետ կառավարում, ֆինանսական հաստատությունների նկատմամբ վստահություն

JEL: G00, G28, F5


ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակի ուսումնասիրություններ են կատարել ՀՀ կենտրոնական բանկը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, Համաշխարհային բան-

կը: Վերջինս իրականացրել է ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտությանը նվիրված արժեքավոր հետազոտություն, որն ընդգրկել է 2 հազար տնային տնտեսություններ բոլոր մարզերում, այդ թվում՝ Երևան քաղաքը, 18 այլ քաղաքներ, 30 գյուղ: Նշված հետազոտությամբ բացահայտվել են հետևյալ հիմնական խնդիրները. բյուջեի պլանավորման ունակությունների գերազնահատում, բյուջեի կարճաժամկետ պլանավորում, ֆինանսական հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործում, պարտքերի անարդյունավետ կառավարում, տեղեկությունների հավաքագրման և գնումներ կատարելու մշակույթի բացակայություն, խնայողությունների անարդյունավետ կառավարում, սեփական իրավունքների թույլ պաշտպանություն, բարեկեցիկ ծերությունը հոգալու մշակույթի բացակայություն, ֆինանսական հաստատությունների նկատմամբ անբավարար վստահություն:

Առաջին խնդրի ձևակերպման համար որպես հիմք են ծառայել ոչ կայուն կամ սեզոնից կախված տատանվող եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների հետազոտությունները, որոնք ներառում են գյուղացիական տնտեսությունները (բնակչության 35%-ը) և մասնավոր հատվածի չձևակերպված աշխատողները (հարցվածների 8%-ը):

Հետազոտությամբ բացահայտվել է, որ գյուղացիական տնտեսություններում առկա է նաև գիտելիքի պակաս: Շատերը չեն կարողանում տարբերակել գյուղատնտեսական գործունեության հասույթը շահույթից, որի հետևանքով այսպիսի տնտեսությունները հաճախ իրենց ծախսերը պլանավորում են՝ ելնելով ոչ թե շահույթի, այլ հասույթի չափից: Բյուջեի պլանավորման ունակությունների գերազնահատման պատճառով այնպիսի տնտեսություններում առաջանում է հաջորդ գյուղատնտեսական սեզոնի համար անհրաժեշտ ծախսերի անբավարարություն: Հետևաբար՝ հանրության շրջանում բյուջեի պլանավորման ունակությունների զարգացումը հնարավորություն կընձեռի ավելի արդյունավետ բաշխելու եկամուտները ժամանակի մեջ՝ խուսափելով պարտքերից:

Գծապատկեր 1-ից երևում է, որ թեպետ հարցվողներն իրենց համարում են կարգապահ, ծախսերը պլանավորում են, այդուհանդերձ, դրանք կատարում են ոչ ըստ նախապես պլանավորածի, որը կարող է վկայել նրանց՝ բյուջեի պլանավորման ունակությունների գերազնահատման մասին:




Գծապատկեր 1. Բյուջեի պլանավորման ունակությունների գերազնահատումը¹

¹ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

Բնակչության ֆինանսական գրագիտության ոչ պատշաճ մակարդակի մասին է վկայում նաև այն, որ հարցվածների 84%-ը բյուջեն պլանավորում է 6 ամիս ժամկետով, ինչը հետագայում խնդիրներ է առաջացնում: Այսպես օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում անհրաժեշտ է պլանավորում առնվազն 1 տարով՝ մի քանի ամիսների ընթացքում ստացվող եկամուտը բաշխելով բոլոր ամիսների վրա, երեխաների կրթությունն ապահովելու համար պահանջվում է պլանավորել դեռևս տարիներ առաջ, իսկ բարեկեցիկ ծերության համար պահանջվում է 20–30 տարվա պլանավորում:

Իսկ որքա՞ն փող է անհրաժեշտ երեխաների կրթության համար: Եթե խոսքը վերաբերում է ՀՀ-ում կրթության մասին, ապա միայն բարձրագույն կրթության երկու աստիճանի (6 տարի) համար կպահանջվի 2–4 մլն դրամ: Հետևաբար՝ պետք է կուտակել այդքան գումար 4–6 տարի ուսումնառության նպատակով: Եվրոպական միջին մակարդակի կրթության համար կպահանջվի 30–50 մլն դրամ՝ հաշվի առնելով նաև այնտեղ ապրելու ծախսերը: Եթե նկատի առնվի աշխարհում ամենահեղինակավոր կրթությունը՝ ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, ապա անհրաժեշտ է 150–200 մլն դրամ ամբողջ ժամանակահատվածի համար: Ի դեպ, պետք է հաշվի առնել նաև արժեզրկումը կրթության բնագավառում, որը վերջին 20 տարիներին, միջին հաշվով, կազմում է 7,5%²:

Փաստորեն, ՀՀ բնակչությունը հիմնականում հակված է բյուջեն պլանավորել կարճատև ժամանակահատվածի հաշվով: Մինչդեռ, կանխատեսելի ու երջանիկ ապագայի ակնկալիքով պետք է պլանավորել ավելի տևական ժամանակահատվածի համար: Ուշագրավ են հարցվողների ինքնաբնութագրի ցուցանիշները պլանավորման նկատմամբ վերաբերմունքի առումով.



Գծապատկեր 2. Հարցվողների ինքնաբնութագրի ցուցանիշները ֆինանսական պլանավորման նկատմամբ վերաբերմունքի առումով³


Գծապատկերից երևում է, որ հարցվածների 77.7%-ը համաձայն է, որ պլաններ է կազմում ըստ կարճ ժամանակահատվածի, ինչը համահունչ է այն բանին, որ 68.2%-ն ավելի շատ ապրում է այսօրով՝ չնտածելով վաղվա մասին, իսկ 88.7%-ը համոզված է՝ «օրը կգա, բարին հետը»: Մինչդեռ, հարցվածների 81%-ը համոզված է, որ հնարավոր չի լինի առանց պարտք վերցնելու կատարել չնախատեսված մեծ ծախսերը: Ֆինանսական արդյունքի

² Ст'я Финансовое планирование для 30-летних. <https://lifehacker.ru/2016/01/14 /finansovoe-planirovanie/>

³ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

(պրոդուկտ), մասնավորապես՝ ապահովագրական, վերաբերյալ գիտելիքների պակասը շատ դեպքերում մարդկանց հնարավորություն չի տալիս հասկանալու, որ, օրինակ, ապահովագրությունը կարող էր թեթևացնել ծախսի բեռը ծանր օրերին և խուսափել պարտքերից անկանխատեսելի ծախսերի ի հայտ գալու դեպքում:

Սեփական ֆինանսները կառավարելու գիտելիքների, վստահության և հմտությունների ամբողջությունն անվանում են ֆինանսական ունակություն⁴: Այդ առումով կարևորվում է պարտքի կառավարման հմտությունը: Համաշխարհային բանկի հետազոտությամբ բացահայտվել է այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին պարտքի անարդյունավետ կառավարումն է (գծապատկեր 3): Այսպես՝ հետազոտության պահին հարցվածների 59%-ը պարտքեր ուներ: Ընթացիկ պակասուրդը ծածկելու համար մարդիկ պարտք են վերցնում տարբեր աղբյուրներից, մասնավորապես. 46%-ը՝ խանութներից, 40%-ը՝ մտերիմներից, իսկ 7%-ը վարկ է վերցնում բանկից, 7%-ը՝ գրավատնից: Հարցվածների 36%-ը հին պարտքերը մարելու համար վերցնում են նոր պարտքեր, այսինքն՝ կատարում են պարտքերի վերաձևավորում: Հարցվածների 6%-ը պարտքերը վերաձևավորում են միշտ, այսինքն՝ մշտապես գտնվում են պարտքերի մեջ: Բացի այդ, պարտապանների 20%-ն ընդունում է, որ «վերցրել է ավելին, քան կարող էր իրեն թույլ տալ»: Նրանցից շատերը շարունակաբար վերաֆինանսավորելով հին պարտքերը՝ ստիպված են լինում վերցնել *թանկ* (բարձր տոկոսադրույքով) և հաճախ չձևակերպված վարկեր (ընկերներից, ծանոթներից և այլն):



Գծապատկեր 3. Պարտքի արդյունավետ կառավարումը⁵

Պարտքերի կառուցվածքը և վերաձևավորման բաժնեմասը վկայում են պարտքի կառավարման ցածր արդյունավետության մասին: Հարցվածների 46%-ը պարտք է խանութներին, այսինքն՝ գնումներ է կատարում վճարման հետաձգումով, 40%-ը պարտք է վերցնում մտերիմներից, իսկ 7-ական տոկոսը բանկերից և գրավատներից վարկեր վերցնողներն են⁶: Կարելի է եզրակացնել, որ ոչ ֆորմալ (չձևակերպված) ֆինանսական ծառայություններն այս պարագայում գերակշռում են:

⁴ St'eu Financial Inclusion & Financial capability. London, Resolution Foundation, p.1. http://www.resolutionfoundation.org/media/media/downloads/Financial_Inclusion_Financial_Capability_Explained.pdf


⁵ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

⁶ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

Վերոնշյալը վկայում է նաև, որ ՀՀ-ում գոյություն ունի ֆինանսական հնարավորությունների և ֆինանսական շուկայում առաջարկվող ծառայությունների հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման խնդիր, ինչը, ենթադրաբար, կարող է լինել ֆինանսական գիտելիքների պակասը, իսկ առանձին դեպքերում ֆորմալ շուկայում ֆինանսական արդյունքի գրավչության կամ մատչելիության ցածր մակարդակը: Մինչդեռ, օրինակ, բանկային ծառայություններից ճիշտ օգտվելու դեպքում (խնայողություններ և վարկային պատմության ստեղծում) մարդիկ կարող են ավելի արագ, էժան և քաղաքակիրթ ձևով ծածկել իրենց ժամանակավոր ծախսային պակասուղները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գոյություն ունի խնայողությունների անարդյունավետ կառավարման խնդիր: Հարցվածների 66%-ը գումար է խնայում ապագայի չնախատեսված մեծ ծախսերի համար, մինչդեռ գումար խնայող հարցվածների ընդամենը 6%-ն ավանդ ունի բանկերում:

ՀՀ-ում խնդիր է բարելոցել ծերությունը հոգալու մշակույթի բացակայությունը: Մինչև 60 տարեկան հարցվածների ընդամենը 3%-ն է նշել, որ կենսաթոշակային տարիքում ծախսերը հոգալու է նախօրոք արված խնայողությունների (1.9%) և կուտակային կենսաթոշակային համակարգից (1.1%) օգտվելու միջոցով: Իսկ 26%-ն ակնկալում է օգտագործել պետությունից ստացվող բազային կենսաթոշակը: 51%-ը նշել է, որ պատկերացում չունի, թե ինչ միջոցներով է ֆինանսավորելու իր ծերությունը (գծապատկեր 4): Հավանաբար, նման իրավիճակն ավանդույթի ազդեցությունն է. հայկական ընտանիքում անհիշելի ժամանակներից ընդունված է եղել, որ հասունացած երեխաները սովորաբար հոգ են տանում իրենց տարեց ծնողների մասին: Բացի դրանից, գոյություն ունեն օբյեկտիվ տնտեսական պատճառներ. ՀՀ բնակչության կենսամակարդակը կամ միջին տարեկան եկամուտների մեծությունը խնայողության հնարավորություն չի ընձեռում:




Գծապատկեր 4. Կենսաթոշակային տարիքում ծախսերը հոգալու վերաբերյալ հարցման արդյունքները⁷

ՀՀ-ում ցածր է նաև ֆինանսական հարցերում սեփական իրավունքների պաշտպանության մշակույթի մակարդակը: Վերջին 3 տարում ֆինանսական հաստատության հետ խնդիր ունեցողների 40%-ը որևէ գործողություն չի

⁷ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

ծեռնարկել դա լուծելու համար: Չծեռնարկած հարցվածների 43%-ն իր պահվածքը պատճառաբանել է սպառողների՝ օրենքով պատշաճորեն պաշտպանված չլինելով: Վեճ ունեցած հարցվածների 66%-ը տեղյակ է եղել Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին, սակայն ընդամենը 9%-ն է իր խնդրով դիմել վերջինիս:

Խնդիր է նաև տեղեկությունների հավաքման և գնումներ կատարելու մշակույթի բացակայությունը: Այսպես՝ հարցվածների 78%-ն օգտվում է առնվազն մեկ ֆինանսական ծառայությունից, իսկ ամենատարածվածը պարտավորություն ենթադրող ֆինանսական ծառայություններն են (վարկ՝ 49%, փոխառություն՝ 48%): Հարցվածների 50%-ը նշել է, որ ինքն է ֆինանսական ծառայությունից օգտվելու որոշում կայացնողը: Խիստ սակավաթիվ են տարբեր ֆինանսական ծառայություններ ընտրելու համար մեկից ավելի այլընտրանքներ դիտարկողները: Օրինակ՝ տնային տնտեսությունում ֆինանսական որոշումներ կայացնողների 54.8%-ը վարկի և 87.5%-ը փոխառության մասին նախօրոք տեղեկություններ չեն փնտրում: Գծապատկեր 5-ում ներկայացված է, թե ֆինանսական ծառայություններից օգտվողների քանի տոկոսն է մինչ տվյալ ծառայությունից օգտվելը դիտարկել դրա այլընտրանքը:




Գծապատկեր 5. Ֆինանսական ծառայություններից օգտվողները և դրանց վերաբերյալ հարցվածների իրազեկվածությունը⁸

Ֆինանսական ծառայություններ գնելիս հարցվածների 8%-ն է դիմում մասնագիտական աղբյուրների (ֆինանսական ոլորտի մասնագետների), համացանցից տեղեկություններ է փնտրում ընդամենը հարցվածների 0.1%-ը, մինչդեռ ֆինանսական ծառայությունների մասին մանրամասն տեղեկություններ առկա են կազմակերպությունների կայքերում, հարցվողների 19%-ն առհասարակ ոչ մեկին չի դիմում, իսկ 71%-ը ֆինանսական խորհրդատվության համար դիմում է միայն ընտանիքի անդամներին և մտերիմներին: Արդյունքում՝ ձեռք է բերվում հիմնականում ոչ լավագույն պայմաններով ծառայությունը:

⁸ Տես Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

«ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտության հետազոտությամբ բացահայտված խնդիրներից է նաև ֆինանսական հաստատությունների նկատմամբ անբավարար վստահությունը: Գծապատկեր 6-ում ներկայացված տվյալները վկայում են, որ որոշ դեպքերում այդ անվստահությունն անհիմն է և պայմանավորված է բնակչության մեծ մասի ֆինանսական գիտելիքների ոչ պատշաճ մակարդակով:



Գծապատկեր 6. Վստահությունը ֆինանսական հաստատությունների նկատմամբ⁹

Ինչպես երևում է գծապատկեր 6-ից, հարցմանը մասնակցած անձանց 61.7%-ը վստահում է առևտրային բանկերին, 35.3%-ը՝ ապահովագրական ընկերություններին, 20.4%-ը՝ ֆինանսական շուկան կարգավորող պետական մարմիններին, 32.8%-ը՝ ֆինանսական համակարգի հաշտարարին, 54.2%-ը՝ «ՀՀ կենտրոնական բանկին»: Ուշագրավ է ապահովագրական ընկերությունների նկատմամբ վստահության ցուցանիշը: ԱՊՊԱ-ի ներդրմանը նախորդող ժամանակահատվածում ավտոմեքենա ունեցողների մեծ մասը հոռետեսորեն էր տրամադրված: Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության՝ օրենսդրորեն ամրագրված¹⁰ պարտադիր պայմանը հարյուրհազարավոր մարդկանց, որոնցից շատերը չունեին տարրական գիտելիքներ ապահովագրական արդյունքի մասին, դարձրեց ապահովագիրներ: Կարճ ժամանակ անց, ի հայտ եկած ապահովագրական պատահարների մասնակիցներին վճարված ապահովագրական փոխհատուցումները ցույց տվեցին ֆինանսական այդպիսի ծառայությունից օգտվելու օգուտները:

Բացի վերոնշյալ խնդիրներից, գոյություն ունեն մի շարք այլ խնդիրներ՝ կապված ֆինանսական բնագավառին առնչվող բնակչության վերաբերմունքի հետ: «Հ-ին բնորոշ առանձնահատկություն է նաև փողի և անձնական ֆինանսների կառավարման նկատմամբ բացասական վերաբերմունքը և փողը չկարևորելու մշակույթը: Դպրոցներում և ընտանիքներում հաճախ շրջանցվում են փողի և անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող հարցերը, մինչդեռ անձնական ֆինանսների հետ կապված խնդիրներն ուղղորդում են մարդուն ողջ կյանքի ընթացքում:

⁹ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:

¹⁰ Տե՛ս «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 18.05.2010:

Այսպիսով՝ թեպետ ՀՀ-ում ֆինանսական ծառայությունների սպառողները պլանավորում, խնայում, պարտք են վերցնում և մարում, բյուջե են կառավարում, սակայն իրենց անձնական ֆինանսների կառավարումը հաճախ արդյունավետ չեն կատարում. չեն օգտվում ֆինանսական շուկայի ընձեռած բազմազան հնարավորություններից, ձևավորված չէ համապատասխան մշակույթ, առկա է գիտելիքների, ունակությունների և տեղեկացվածության պակաս:


Ֆինանսական գրագիտության ցուցանիշների տարբերությունները ԵՄ երկրների միջև նշանակալի են: Միջինում մեծահասակների 52%-ը ֆինանսապես գրագետ է, իսկ ֆինանսական հայեցակարգերի ըմբռնման աստիճանն ամենաբարձրը Հյուսիսային Եվրոպայում է: Դանիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների և Շվեդիայի բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակներն ամենաբարձրն են Եվրոմիությունում. այստեղ մեծահասակների առնվազն 65%-ը ֆինանսապես գրագետ են¹¹: Մակարդակը շատ ավելի ցածր է Հարավային Եվրոպայում: Օրինակ՝ Հունաստանում և Իսպանիայում գրագիտության մակարդակը, համապատասխանաբար՝ 45% և 49% է: Իտալիայի (37%) և Պորտուգալիայի (26%) գրագիտության մակարդակներն ամենացածրերից են հարավում¹²: Ֆինանսական գրագիտության մակարդակները ցածր են նաև այն երկրներում, որոնք ԵՄ-ին միացան 2004 թվականից: Բուլղարիայում և Կիպրոսում բնակչության 35%-ն է ֆինանսապես գրագետ, իսկ Ռումինիան (22%) ֆինանսական գրագիտությամբ ԵՄ-ում ամենացածր ցուցանիշն ունի:

Ֆինանսական գրագիտության ամենաբարձր ցուցանիշներն ունեցող երկրների շարքում են նաև Ավստրալիան, Կանադան, Իսրայելը, Նորվեգիան և Մեծ Բրիտանիան, որտեղ մեծահասակների շուրջ 65%-ը ֆինանսապես գրագետ են: Հարավային Ասիայի երկրներում ֆինանսական գրագիտության մակարդակը բավական ցածր է. մեծահասակների միայն 25%-ն է ֆինանսապես գրագետ:

Ջարմանալի չէ, որ ֆինանսական գրագիտության ցուցանիշները չափազանց տարբեր են առաջատար և զարգացող տնտեսություններում: Միջինում՝ առաջատար տնտեսությունների՝ Կանադայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի մեծահասակների 55%-ը ֆինանսապես գրագետ է (գծապատկեր 7): Սակայն նույնիսկ այդ երկրների ֆինանսական գրագիտության մակարդակների տարբերությունները տատանվում են լայն տիրույթում՝ 37%-ից (Իտալիա) մինչև 68% (Կանադա): Ի տարբերություն դրա, զարգացող տնտեսություններ ունեցող խոշոր, այսպես կոչված, BRICS երկրներում (Բրազիլիա, Ռուսաստանի Դաշնություն, Հնդկաստան, Չինաստան և Հարավային Աֆրիկա), միջին հաշվով, ֆինանսապես գրագետ է մեծահասակների 28%-ը՝ Հնդկաստանի 24% և Հարավային Աֆրիկայի 42% ցուցանիշներով:

¹¹ Տե՛ս Klapper L., Lusardi A., Oudheusden P., Financial Literacy Around the World: Insights from the Standard & Poor's Ratings Several Global Financial Literacy Survey, էջ 8:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 24:




Գծապատկեր 7. Ֆինանսական գրագիտության մակարդակների տարբերություններն աշխարհում¹³

Գծապատկեր 7-ից երևում է, որ հետխորհրդային անցումային տնտեսություններում ֆինանսական գրագիտության մակարդակները գտնվում են 17–40 տիրույթում: Ամենացածրերից են Հայաստանի (18%), Տաջիկստանի (17%) և Ղրղզստանի (19%) ցուցանիշները, իսկ ամենաբարձր ցուցանիշներն ունեն Թուրքմենիան (41%), Ուկրաինան (40%) և Ղազախստանը (40%): Վերջիններիս մոտ են Ռուսաստանը (38%) և Բելառուսը (38%): Անդրկովկասում առաջին տեղում է Ադրբեջանը (36%), որին հետևում է Վրաստանը (30%), իսկ Հայաստանը նշանակալիորեն գիջում է այդ երկրներին: Անցումային երկրներում (առանց Մերձբալթյան երկրների) ֆինանսական գրագիտության միջին ցուցանիշը 30.4% է:

Գծապատկեր 8-ում ներկայացված են վերին, միջին և ստորին դիրքեր զբաղեցնող երկրներն ըստ 2014 թվականի գլոբալ ֆինանսական գրագիտության աստիճանակարգման: Ինչպես երևում է գծապատկերից, Հայաստանը գտնվում է ստորին մակարդակում՝ 144 երկրների շարքում զբաղեցնելով 137-րդ տեղը: Հայաստանի ցուցանիշը կրկնակի ցածր է միջին խմբերի երկրների և գրեթե քառակի անգամ՝ վերին խմբի երկրների ցուցանիշներից:

Ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը ֆինանսական և տնտեսական մասնակցության որոշիչ խոչընդոտ է, որովհետև ֆինանսների և ֆինանսական արդյունքի վերաբերյալ գիտելիքի պակասը հատկապես շատ աղքատ մարդկանց և կանանց պարագայում անհասանելի է դարձնում բանկային և ֆինանսական արդյունքները՝ այդպիսով նրանց դուրս թողնելով ֆինանսական շուկաներից:

¹³ Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ S&P Global Financial Literacy Survey | Participating Countries. <http://gflec.org/wp-content/uploads/2016/02/Gallup-country-list-with-score.pdf>




Գծապատկեր 8. Վերին 10, միջին 10 և ստորին 10 երկրներն ըստ զլորթալ ֆինանսական գրագիտության աստիճանակարգման¹⁴

Կարող են երկրների եկամուտները բացատրվել ֆինանսական գրագիտության մակարդակի տարբերություններով: Բարձր եկամտով երկրներում, բնակչության մեկ շնչի հաշվով, սովորաբար, ֆինանսական գրագիտության մակարդակը բարձր է (գծապատկեր 9): Ղա ակնհայտ է, երբ դիտարկվում են աստիճանակարգում ընդգրկված 144-ից ամենահարուստ 50 երկրները (72 երկիր): Այդ երկրներում ֆինանսական գրագիտության մակարդակի շուրջ 38% վարիացիայով կարող է բացատրվել եկամուտների տարբերությունները: Երկրների՝ մեկ շնչին բաժին ընկնող 12 հազ. դոլար կամ պակաս ՀՆԱ-ով աղքատ կեսի դեպքում ապացույց չկա, որ եկամուտը կախված է ֆինանսական գրագիտությունից: Ղա, ենթադրաբար, նշանակում է, որ ազգային

¹⁴ Տե՛ս S&P Global FinLit Survey. <http://www.forbes.com/sites/maggiemcgrath/2015/11/18/in-a-global-test-of-financial-literacy-the-u-s/#341ad0db6a16>

մակարդակում կրթության և սպառողների շահերի պաշտպանության քաղաքականությունն ավելի մեծ ազդեցություն ունի այդ տնտեսություններում ֆինանսական գրագիտության ձևավորման վրա, քան ցանկացած այլ գործոն:



Գծապատկեր 9. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ և ֆինանսական գրագիտության կապը¹⁵

Այսպիսով՝ միջազգային համեմատություններից կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Անցումային կամ հետխորհրդային 12 երկրների շարքում (առանց Մերձբալթյան երկրների) Հայաստանը ֆինանսական գրագիտության 18 % մակարդակով զբաղեցնում է 11-րդ տեղը:
2. Հարավային Կովկասի երեք երկրների մեջ Հայաստանի ցուցանիշը կրկնակի պակաս է Ադրբեջանի և 1.7 անգամ՝ Վրաստանի ցուցանիշներից:
3. Ըստ զլոբալ ֆինանսական գրագիտության աստիճանակարգման՝ Հայաստանի Հանրապետությունը վատ դիրքում է. 144 երկրների շարքում զբաղեցնում է 137-րդ հորիզոնականը:
4. Թեպետ մեկ շնչի հաշվով մինչև 12 հազ. դոլար ՀՆԱ ունեցող երկրների առնչությամբ դժվար է բացահայտել ՀՆԱ–ֆինանսական գրագիտության մակարդակ կապը, այդուհանդերձ, Հայաստանի պարագայում այդպիսի կապն ակնհայտ է:

Հողվածի սահմաններում փորձեցինք տալ ֆինանսական գրագիտության ընդհանուր, մակերեսային գնահատականը, ինչը կարող է ընդունելի լինել միջերկրային համեմատությունների դեպքում: Ֆինանսական գրագիտությունը բազմաշերտ երևույթ է, և որոշակի օրինաչափություններ ու հիմնախնդիրներ բացահայտելու, այդ ուղղությամբ քաղաքականություն մշակելու տեսանկյունից անհրաժեշտ են մանրազնին հետազոտություններ և վերլուծություններ:

¹⁵ Klapper L., Lusardi A., Oudheusden P., Financial Literacy Around the World: Insights from the Standard & Poor’s Ratings Several Global Financial Literacy Survey, p. 9.

Օգտագործված գրականություն

1. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 18.05.2010:
2. Համաշխարհային բանկի 2012 թ. «Ֆինանսական ունակությունների հետազոտություն»:
3. Финансовое планирование для 30-летних. <https://lifehacker.ru/2016/01/14/finansovoe-planirovanie/>
4. Financial Inclusion & Financial capability. London, Resolution Foundation, p.1. http://www.resolutionfoundation.org/media/media/downloads/Financial_Inclusion_Financial_Capability_Explained.pdf
5. Klapper L., Lusardi A., Oudheusden P., Financial Literacy Around the World: Insights from the Standard & Poor's Ratings Several Global Financial Literacy Survey.
6. S&P Global Financial Literacy Survey / Participating Countries. <http://gflec.org//wp-content/uploads/2016/02/Gallup-country-list-with-score.pdf>
7. S&P Global FinLit Survey. <http://www.forbes.com/sites/maggiemcgrath/2015/11/18/in-a-global-test-of-financial-literacy-the-us/#341ad0db6a16>

ГАГИК ВАРДАНЯН

Доктор экономических наук, профессор

ДАВИД ВАРДАНЯН

Студент второго курса магистратуры АГЭУ по специальности “Корпоративные финансы”, Менеджер по обслуживанию клиентов платформы с пониженным риском в “Филипп Морис Армения”

Финансовая грамотность в Республике Армения: международные сравнения. – В статье обсуждаются вопросы финансовой грамотности населения Армении. В частности, рассмотрены задачи краткосрочного планирования бюджета, неполноценного использования финансовых возможностей, эффективного управления долгами и сбережениями, отсутствия культуры сбора информации при покупках, недостаточного доверия к финансовым учреждениям. Состояние финансовой грамотности в Армении рассмотрено в контексте международных сравнений.

Ключевые слова: *финансовая грамотность, способности планирования бюджета, эффективное управление долгами, эффективное управление сбережениями, доверие к финансовым учреждениям.*

JEL: G00, G28, F5

GAGIK VARDANYAN

Doctor of Economics, Professor

DAVIT VARDANYAN

Graduate student in Master's Degree at ASUE, majoring in Corporate Finance, Reduced Risk Platform (RRP) Customer Care Executive in “Philip Morris Armenia”

Financial Literacy in the Republic of Armenia: International Comparisons. – The article discusses the financial literacy of the population of Armenia. In particular, the tasks of short-term budget planning, inadequate use of financial opportunities, effective debt management and savings, the lack of the culture of gathering information and making purchases, and insufficient trust in financial institutions are considered. The state of financial literacy in Armenia is reviewed in the context of international comparisons.

Key words: *financial literacy, budget planning abilities, effective debt management, effective savings management, confidence in financial institutions.*

JEL: G00, G28, F5